



06401315  
 Республика Армения  
 Марз Лори  
 ООО "Эксплуатация и  
 Строительство Дорог  
 Степанавана"

06401315  
 Հայաստանի Հանրապետություն  
 Լոռու մարզ  
 «Ստեփանավանի  
 ճանապարհների շահագործում  
 և շինարարություն» ՍՊԸ

06401315  
 Republic of Armenia  
 Marz Lori  
 «Road Building &  
 Expolitation of  
 Stepanavan» LLC

N <sup>06/</sup> ~~02~~ " 13 " 06 2014 թ.

ք. Ստեփանավան փրահայոց մայրուղի 10  
 հեռ. (055) 32-64-13

Ստեփանավանի Օրինու կենտրոնի  
 Համակարգող տիկին Մ. Մելիքջանյանին

Հարգելի տիկին Մելիքջանյան, Ձեզ ենք տրամադրում Ձեր գրությամբ ներկայացրած հարցերի հիմնավորումները:

1. Բարդիների էտման աշխատանքները մեր կողմից կատարվում է տրանսպորտի նախարարության 13.05.2014թ. N218-07/187 գրության և կից բնապահպանության նախարարության 24.06.2013թ. N5/23.6/51769 և Հայանտառ ՂՈԱԿ-ի տնօրենի 23.04.2013թ. N01-10/434 գրությունների հիման վրա: Առաջնորդվելով էտման աշխատանքները կատարվում են համաձայն ավտոմոբիլային ճանապարհների երկայնքով ձյունապաշտպան տնկարկների BCH 34-78 հրահանգի 5 և 7 կետերի :

2. Առաջնահերթ և շատ շտապ էտվում են այն բարդիները, որոնք ունեն մոտ 15-35 աստիճանի թեքվածություն դեպի ճանապարհի երթևեկելի մասը և 4-5 մ բարձրությունից գտնվում են փթաց վիճակում, խանգարելով անվտանգ երթևեկության ապահովմանը, ինչ վերաբերվում է հատումների արդյունքում առաջացած փայտանյութի օգտագործմանը, տրանսպորտի նախարարության կողմից առաջարկվել է Լոռու մարզպետարանին փայտանյութը տրամադրել Ստեփանավանի տարածաշրջանի սոցիալապես անապահով ընտանիքների ցուցակը նախարարության և մարզպետարանի հետ համատեղ նրանց հատկացնելու համար:

Ակնկալում եմ Ձեր անմիջական համագործաբցությունը աշխատանքների կատարման ժամանակ:

Հարգանքով՝

«Ստեփանավանի ՃՃԾ» ՍՊԸ-ի

տնօրեն՝

Հ. Հովիվյան